



ՏՆՕՐԼՆ. ԻՍԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

• ՏԱՐԻ ԹԻԻ 10

ՃԱՐԱՐ

3 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ՍՊԱՋՆԱՄԳ ԵՍԽԻՂՇՈՒՄ

ԶԵՆԻԹ

ՍՊԱՋՆԱՄԳ ԵՍԽԻՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՅԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պաշկ-Գարու, Օռոգսի-Պաք հաստատութեան գէտ, Թիւ 16

(آه آصا دوربار) شرکت مطبوعه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՍՍՏՈՒՐԵԱՆ

4. Պոլիս, Պաշկ-Ալի հաստատութեան, Թիւ 52

Հատը 40 փաթա



Չե՛ղի, ոսկի ու ոսկի եւ ձեռի
 միանգամայն մեկնաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅԹԱՅԹԻՆ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:
 Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Հսկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԺԱԿԱՆ
 ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ԲՆԲԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՍԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն
 Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Հսկերութեան Կեդր. վարչատեղին՝ կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւ լոյլուի տունը:



ՔԵՒԵԼ Ք ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրաձան եւ Բաղաբալան :
 — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. դաւաններու համար տարեկան 108 դրշ. վեցամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառուած՝ 8աւր փաւա: ԱՐԵՒԵԼ Ք հրա լարակ կ'ըլլէ տմէն օր, կէս օրին, խընաւալ բովանդակութեամբ, ընտիր լոգուածներով, թարմ լարով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼ Ք, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-ԿԵՐԱԶՍԻԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և հրեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, երկեղեղական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւ այլն, բայց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւ այլն:

ԱՐԵՒԵԼ Քի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Դարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մարմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 10

ՇԱԲԱԹ

3 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԳՐԱԳԷՏԻ ՏՕՄԻՆՕ

Բարիւցի պարզամիտ խանութպան մը, որ անշուշտ իր ուսումը Sorbonneի մէջ չէր կատարելագործած, իր սիրելի մէկ բարեկամին գերեզմանաքարին վրայ՝ հետեւեալ քառեակը տողելու գաղափարը կ'ունենայ, որուն ոտանաւոր ըլլալուն մասին անշուշտ կը ներէ որ լրջօրէն տարակուսինք:

Ահա՛ այդ քառեակը.

Ci — git mon ami Mardoche
Il a voulu être enterré à Saint Eustache
Il a porté trente-deux ans la hallebarde
Dieu lui fasse miséricorde!

Այս տապանագիրը յիշեցի երբ անցեալ օր հին թերթեր թղթատած ատեն՝ հանդիպեցայ Տօմինօյին « Կաղանդ » վերնագրով մէկ սօնէին, որուն վրայ ձեզի գաղափար մը տալու համար՝ անկէ մէկ քանի տող արտագրելու փափաքին չեմ կրնար դիմադրել.

« Եւ կը խորհիմ դեռ անոնց որ անցեալին միջ տխուր
« Վայելքներու և տարփանքի համար հիւժեր են և ուր
« Յիշատակներ թողած են այդ մուացման մէջ փոսին:

« Եւ որ յանկարծ Կաղանդի ցուրտ գիշերը տուջին,
« Այդ յուշքերը կ'արթննան, հին վիշտերու կը կառչին
« Կը խռովեն սիրտերը, և հոգւոյն հետ կը խօսին: »

Վերջացաւ, մի՛ վախճաք: Անարժէք սօնէները ուրիշ ոտանաւորներուն վրայ սա անժխտելի գերազանցութիւնն ունին՝ որ շուտ կը վերջանան, ինչ որ կրնայ վերջապէս յատկութիւն մը նկատուիլ ուրիշ յատկութիւններու բացակայութեանը:

Կրնանք ուրեմն կրկնել Լաբալիսի հետ թէ՛ շատ անգամ անյաջող սօնէները զուարճալի կ'ըլլան, բայց քնաբեր, երբէ՛ք:

Վերլուծենք քիչ մը, եթէ կը հաճիք:

Շատ բան չհասկցաք, այնպէս չէ՛:

Նախ կը տեսնեմ որ սօնէն *sauvi* եւ չորս ոտքով է, *hallebarde* և *miséricorde* իրարու *rimer* ընող բանաստեղծին տապանագրին պէս:

Տառն և հիւնդ ոտքով տող մ'իսկ կայ...: Չափազանց չափալուծեամբ մտնել է ոտքերը, տրուած ըլլալով մանաւանդ որ՝ արժանիքը շատ անգամ ոտքերու թկիւնին հետ ուղիղ չի համեմատիր...:

Միւս կողմէ *enjambement*ները այնքան մեծ տեղ մը բռնած են որ՝ արձագ գրութիւն մը կարգալու պատրանքը կ'ունենայ մարդ առաջին պատեհութեամբ: Չեմ համարձակիր այս մասին Պուալօյի գրածէն մէջբերում մ'ընել, նկատելով որ Տօմինօյի պէս գրագէտ մը Պուալօյի հետ շատոնց բարեկամացած ըլլալու է, կ'ենթադրեմ: Բայց, լաւագոյն յարգանքը զոր պիտի ընէր Պուալօյի յիշատակին, այն ալ ոտանաւորի կանոններուն աւելի ուշադիր և խղճամիտ հետեւողութիւն մը չպիտի ըլլար միթէ: Ոտնոտումը (*enjambement*) Գերեյի կամ լաւ եւս *sauvi*ի զարտուղութիւն մ'է, հազուադէպ պարագաներու մէջ միայն կիրարկելի — թող ներէ ինձ *Hernani*ի հանճարեղ հեղինակը — բայց 14 տողնոց կտորի մը մէջ ժուժկալ միտքի մը համար բնաւ մարսելի չեն «*գիմացի ... դուռին*», «*ուր ... յիշատակներ*» (ե՛ւ զարհուրելի *prosaïsme*) և նմաններուն պէս ոտնոտումն... ոտնոտումներ, որոնք աւելի ներդաշնակ սօնէի մը երաժշտութիւնն իսկ պիտի խաթարէին:

Հակառակ որ գաղափար և ... քերականութեան յանգին ետեւէն հեւքոտ և շընջասպառ արշաւ մը կը յօրինեն, յանգերուն մէջ ալ ականջ գգուող երաժշտութիւն մը մէջօտի մը չեմ գտնար: Որչափ պարտասեցուցիչ և տաղտկալի է արդարեւ ին վերջաւորութեան անընդհատ և անխնայ յաջորդութիւնը, փոսին, առաջին, կառչին, խօսին: Միտասի ականջն իսկ պիտի վիրաւորուէր: Գոնէ՛ սօնէին վերջաւորութեան չվերապահուէր, յանգի այս զգալի անկումը, որ իր հետ կը քաշէ նաեւ անկումներու բազմութիւն մը: Անկումներու յուզի՛չ գիրկընդխառնում...:

Իմաստին գալով, *Ce n'est pas d'une clarté aveuglante*:

Մնաց որ քերականութեան հետ ալ կարգադրելիք կարգ մը նուրբ հաշիւներ ունի Տօմինօ:

Կը խորհիք դեռ «*անոնց որ անցեալին «մէջ տխուր վայելքներու և տարփանքի «համար հիւծեր են, և ուր յիշատակներ «թողած են այդ մոռացման մէջ փոսին» Աղէ՛կ, անոնց վրայ խորհելու իրաւունքն ունիք, բայց մենք ալ իրաւունքն ունինք ձեզի հարցնելու թէ «որ»ը ի՞նչ պաշտօն ունի հող, քանի որ «այդ մոռացման մէջ փոսին» (մեջ փոսին, ի՞նչ բարբարոս *inversion*) անցեալը լայնօրէն կը յարաբերէ արդէն, առանց ուրին օժանդակութեան: Ի զուր երեւակայելի և աներեւակայելի միջոցներու կը դիմեմ սա ուրը անկիւն մը տեղաւորելու համար: Միակ դերը զոր կը թուի ունենալ, այն ալ *splendeur*ի հետ յանգ կազմելու անհրաժեշտութիւնն է: Տխուր անհրաժեշտութիւն:*

Շարունակե՛նք:

«Եւ որ յանկարծ Կաղանդի ցուրտ գիւղերը առաջին», հոս ալ կանգ առնենք, եթէ կը հաճիք: Այս յարաբերական դերանունը ի՞նչ կը յարաբերէ արդեօք, ի՞նչ է իր դիրքը, իր պաշտօնը, ինչո՞ւ մեր վերլուծութենէն կը խուսափի, բացը մնացեր է Կաղանդի ցուրտ գիւղերը առաջին: Չեւայ սառի խեղճը:

Իսկ Կաղանդի առաջին գիւղերը ի՞նչ է արդեօք, Կաղանդը երկրորդ գիւղեր մըն ալ ունի, կամ թէ տարւոյն առաջին օրին Կաղանդէ ուրիշ բան մ'ալ կ'ըսեն: *Cruelle enigme* !:

Ալ կը բաւէ, չէ՞: Արդէն *le reste ne vaut pas l'honneur d'être nommé* !...:

Համառոտելով ուրեմն, ըսենք թէ այս հոշակաւոր սօնէն՝

Չունի ո՛չ *cadence*, ո՛չ *césure*, ո՛չ շնորհ, ո՛չ ներդաշնակութիւն, ո՛չ իմաստ և ո՛չ պայծառութիւն, բայց փոխադարձաբար՝

Ունի քերականական սխալներ, *prosodie*ի դէմ ծանր մեղանշումներ, անմարսելի ոտնոտումներ, և ... ներշնչման բացակայութիւն:

Եւ եթէ չունեցածներուն քով աւելցնէք նաեւ ունեցածները, կ'ունենաք բանաստեղ-

ծական Ֆիսագո մը, արձակի և ոտանաւորի տաքականոն խառնուրդ մը, un je ne sais quoi qui n'a plus de nom dans aucune langue :

Հաւագոյնը սպասելու միամտութիւնն ունէինք այնպիսի գրողէ մը, որ չբաւականանալով վերջերս ինքզինքին տուած քննադատի դերով, իր քննախոյզ մտքին trop plein d'activit   կը տարածէ նաեւ Պառնասի ուլորտները, վկայ սէնպօլիսի գէմ իր մղած հողմաշաղացքի պայքարը : A propos, բաւական տոկուն ... քաջութիւն մը և անոգորելի կամակորութիւն մ'ունենալու է մարդ, նուազարեանի տուած հայրական դասէն և Բարիդէ եկած անողոք դատաւճիռէն յետոյ՝ սէնպօլիսի բառը բերանը առնելու իսկ յանդգնիլ, և ինչ որ խնդրոյն աներեւակայելի d  sopilant ելք մը կուտայ — պատուիրել հրապարակաւ Պր. գրաչարին, որ ըստ առաջնոյն չարէ սեմպօլիզմ և ո՛չ սեմպօլիսմ, գիտնալով հանդերձ թէ այս վերջինն է միակ ուղիղ : Արտառոց միամտութիւն մը, որ հասկնալ, րմբոնել, տեսնալ չ'ուզելու անըմբռնելի մտասեւեռումով մը միայն կրնայ մեկնուիլ : Որչափ իրաւունք ունէր սաղմոսերգու գոչելու aures habent et non audient ... :

Բայց եղածն ի՞նչ էր, ի՞նչ կար այդ աստիճան բորբոքելու, խռովելու, և յուսահատութեան հրաչէկ նոպայի մը մէջ՝ Բարիդէ վկայութիւններու խեղճներուն կառչելու, բառի մը ամենապարզ արտասանութեան համար : Ce n'est pas inventer la poudre : Տօմինո ռէր արդեօք լսեր կարգացներ է որ պէտք է սէնպօլիզմ արտասանել, և ո՛չ սէնպօլիսմ : Եթէ նոյն իսկ վստահ ալ ըլլար իր ըսածին ստուգութեան, յախուռն վճիռ մ'արձակելէ առաջ, պէտք էր դարձեալ պրպտել, փաստեր, աղբիւրներ գտնալ, վկայութիւնները բաղդատել, խիստ դատաստանի մը հալոցէն անցնել : Ա՛յս է գննող լուրջ միտքի մը յատկանիշը : Թո՛ղ թէ Տօմինօյին համար անհրաժեշտութիւն մըն ալ չկար իր գրագէտ եղբայրակիցներուն այդ ... դասը տալու, երբ մանաւանդ իր խորհուրդին ալ դիմող չկար : Բայց մեզի պէս չի խորհիր Տօմինօ : Il aime son mal ... ինչպէս պիտի երգեր

բանաստեղծը : Ինքնամոլութեան արտակերպոն արտայայտութիւն մը, որ հոմերային ծիծաղի մը պոռթկումով ողջունուեցաւ հանրութեան ողջամիտ դասակարգէն և պատճառ եղաւ որ Տօմինօյին գրական համբաւը կազմող սիրամարգի փետուրներուն տակ նշմարուի անքննական սովորութեամբ և կայուն միտքի մը ցուրտ մերկութիւնը : Ի՞նչ անկում և ի՞նչ յուսախաբութիւն :

ՎԷՆԵԻՍ

«Թէոդիկ» վերնագրով յօդուածիս մէջ հետեւեալ տպագրական սխալները կը նշմարեմ : Զարնախանձ պէտք է ըլլայ չարախանձ : Առձեռնին բառարանի, պէտք է կարդալ, առձեռն բառարանին :

Վրցին, պէտք է կարդալ Վրձին :

ԱՐՇԱԼՈՅՍ

Ստացած ըլլալով Իգմիրեան օրաթերթին «Արշալոյս» ի յաջորդական թիւերը մինչև ութը, իբրեւ անկողնակալ պաշտօնակից՝ պարտ անձին կը համարինք հրապարակաւ յայտնելու մեր անկեղծ զգացումները այդ նոր թերթին յաջող սկզբնաւորութեան, ընտիր բովանդակութեան և մաքուր տպագրութեան համար :

«Արշալոյս» ի առաջին թիւերէն յայտ յանդիման կերեւի թէ՛ այդ թերթը պիտի ըլլայ մեր համայնքին նամանաւանդ Իգմիրի Հայ ժողովուրդին տիպար օւկանը, անաչառ անկողնակալ և հեռի պաշտօնակցի դձուձ ari  re pens  ներէն :

Թերթին Տէր-Տնօրէնը Մեծ. Բարսեղ Էֆ. Քէչիչեան, համանուն տպարանին Տէր-Տնօրէնը արդէն վստահելի գործօն և սկզբունքի տէր սիրուած անձնաւորութիւն մը ըլլալով՝ իր և իր նորակազմ ուժեղ խմբագրական մարմինովը մեծ յոյս ունինք որ քիչ ատենուան մէջ պիտի կարենայ արդարացնել մեր յոյսերը :

Կ. Պոլսոյ գործակալութիւնը յանձնուած ըլլալով՝ Օսմանլը գրատան վարիչ Մեծ. Յովհաննէս Էֆ. Ազնաւորեանի :

Անգամ մը եւս կը շեշտուի սա արդար ճամարտութիւնը թէ՛ թերթը իր յարատեւութիւնը և բաժանորդներու օրը օրին հասնելու է՛ն կարեւոր պայմանները որչափ ամուր կռուանի մը վրայ կը գտնուին :

Նախապէս մեր յայտնած խնդակցութեան կը կցենք նաեւ՝ մաղթանքը, թերթին ալ աւելի յաջողութեան համար :

Ա Ր Զ Ը

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵՎ ԱՐԱՐ

ԷԼԷՆ. — Երիտասարդ այրի մը, կալուածներ ունի:

ԼԱՅԼԱՆՇ. — Հանգստեան կոչուած սպայ մը, կալուածատէր, 40—50 սարեկան:

ԼՈՒԿԱ. — Տիկ. Էլէնի ծառան, 60 սարեկան:

Տեսարանը կանցնի Տիկ. Էլէնի հիւրասրահին մէջ:

(Շար. եւ վերջ)

Տիկ. Էլէն. — Ուրեմն ըստ ձեզի՝ սիրոյ մէջ ո՞վ է հաւատարիմ, էրիկ մարդիկ թերեւս հէ՛...:

ԼԱՅԼԱՆՇ. — Այո՛, էրիկ մարդիկ:

Տիկ. Էլէն. — Էրիկ մարդիկ... (դառըն ժպիտով մը) էրիկ մարդը հաւատարիմ եւ հաստատամիտ է սիրոյ մէջ... Կեցցե՛ս սա ձեր գիւտին համար: ... Ուրկէ՞ց ո՛ւր ատանկ բան մը պիտի կրնայի մտքիս մէջ զետեղել: (խտուրբամբ) Բայց դո՛ւք ի՞նչ փաստ ունիք էրիկ մարդերուն հաստատամտութիւնը եւ հաւատարմութիւնը ապացուցանող: Ես ալ ձեզի պիտի ըսեմ, ի՞նչ որ կուզէ թող ըլլայ... Խնդիրը մէյմը աստեղուանքը չիմայ... պիտի ըսեմ թէ էրիկ մարդերուն մէջ լաւագոյնը, զոր ճանչցած եմ եւ կը ճանչնամ, ա՛ն ալ Աստուած ողորմի հոգուն, լուսահոգի ամուսինս եղած է... բոլոր սրտովս կը սիրէի զինքը, ա՛յնպէս՝ ինչպէս երիտասարդ եւ հանճարեղ կին մը պիտի կրնար սիրել իր ամուսինը: Երիտասարդութիւնս, երջանկութիւնս, կեանքս եւ հարստութիւնս բոլորը իրեն տուի, իրմով միայն կապրէի, կը պաշտէի զինքը... Է՛հ... եկուր տե՛ս որ էրիկ մարդերուն ձի՛շտ աս լաւագոյնը զիս խաբած է ամենախայտառակ կերպով, եւ իր մեռնելէն ետքը, դարակին մէջէն կնոջ կողմէ գրուած նամակներու ահա՛՝ զի՛ն արձակ մը գտայ: Շատ անգամներ — ո՛հ ինչքան դժուարս կուգայ կոր այս ամէնը վերսիշել — ամբողջ շաբաթներ զիս առանձինս կը ձգէր. իմ ներկայութեանս ուրիշին աչք բերան կը խաղցնէր, զիս կը խաբէր, դրամս կը վատնէր, իմ սէրս կը նախատէր... հակառակ աս ամենուն զինքը կը սիրէի եւ իրեն հաւատարիմ էի... ա՛ն մեռած է թէ՛

պէտեւ բայց ես իրեն միշտ հաւատարիմ եմ... կեանքիս վերջի օրերուն համար հո՛ս, ա՛ս չորս պատերուն մէջ պիտի մնամ, եւ չպիտի ըլլայ որ սուգէս ելլամ:

ԼԱՅԼԱՆՇ. — (Արհամարհոս խնդումով մը) Սո՛ւգ... Է՛հ Տիկին, Աստուծոյ սիրուն զիս տղու տեղ մի դնէք: Կը կարծէք որ չե՛մ գիտեր, չե՛մ կրնար գիտնալ թէ ինչո՞ւ համար սեւազգեաց էք եւ թէ ինչո՞ւ աս չորս պատին մէջ կը նստիք: Ա՛դ ձեր ըրածը այնքան բանաստեղծական եւ այնքան խորհրդաւոր է որ... երիտասարդ սպայ մը կամ երկայն մազերով արուեստագէտ մը ձեր տանը առջեւէն անցնի, պատուհանին նայի եւ ըսէ. «հոս կը բնակի խորհրդաւոր կին մը որ ամուսնոյն սիրոյն համար ինքզինքը չորս պատերուն մէջ բանտարկած է»: Աս վարպետութիւնները մենք շատո՞նց ուսումնասիրած, լինցուցած ենք:

Տիկ. Էլէն. — (Վիշաւորուած) Ի՞նչ կըսէք: Ի՞նչպէս կը համարձակիք ինծի հետ ատանկ խօսիլ:

ԼԱՅԼԱՆՇ. — Ո՛հ իրաւ է թէ հոս չորս պատերուն մէջ բանտարկուած էք... սա կայն կը տեսնամ որ դէմքերնուդ բոլորան չէք մոռցեր քսելու:

Տիկ. Էլէն. — Բայց ի՞նչ իրաւունքով, ի՞նչ համարձակութեամբ ինծի հետ ատանկ կը խօսիս:

ԼԱՅԼԱՆՇ. — Կաղաչեմ Տիկին մի՛ բարկանաք, ես ձեր մատակարարը չեմ: Եւ կընիկ չե՛մ, ես մտքէս անցածը անկեղծօրէն ըսելու սովորած մէկն եմ: Կը խնդրեմ որ չպօռաք:

Տիկ. Էլէն. — Պօռացողը ես չե՛մ, դո՛ւք էք: Հաճէ զիս հանգիստ թողուլ:

ԼԱՅԼԱՆՇ. — Պարտքերնիդ վճարեցէք անմիջապէս կը մեկնիմ:

Տիկ. Էլէն. — Չպիտի վճարեմ:

ԼԱՅԼԱՆՇ. — Չպիտի՞ վճարէք:

Տիկ. Էլէն. — Աս ըրածներնուդ համար չպիտի տամ, հանգիստ ձգէ՛ զիս:

ԼԱՅԼԱՆՇ. — Ես ո՛չ ձեր ամուսինը եւ ոչ ալ նշանածը ըլլալու հաճոյքը ունիմ, ուստի լաւ կընէք եթէ անա՛նկ հիյեք սուրաք չընէք ինծի: (Կը ցածի) Շիտակը ադ ծամածուրթիւններէն չեմ արորժիր:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Բարկանայր) Կը նստիս:

ԼԱՅԼԱՆՇ. — Հանգստանալ կուզեմ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Խնդրեմ, որ ելլես և երթաս:

ԼԱՅԼԱՆՇ. — Պարտքերնիդ վճարեցէք, (մեկուսի) է՛յ կը կատարեմ կոր:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ձեզի պէս ապիկարներու հետ գործ ունենալ երբեք չեմ ուզեր... Խնդրեմ անմիջապէս քաշուէ՛ք. (լուրթիւն) չե՛ս ելլար... Ո՛չ:

ԼԱՅԼԱՆՇ. — Ո՛չ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ո՛չ:

ԼԱՅԼԱՆՇ. — Ո՛չ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Շատ աղէ՛կ, (զանգակը կը հնչեցնէ, Լուսա Ներս կը մտնէ):

Ձ. ՊԱՏՃԱՆԵՐ

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Լուքա՛, սա մարդը դուրս հանէ՛ք:

ԼՈՒՔԱ. — (Լաբլանցի մօտենալով). — Պարո՛ն, քանի որ Տիկինը կը հրամայէ, ինչո՛ւ չէք հաճիր դուրս ելլալ:

ԼԱՅԼԱՆՇ. — (Յանկարծ ոտքի ելլելով): Որո՞ւ հետ կը խօսիս կոր, բիտէի պէս տափ տափարակ կընեմ քեզի:

ԼՈՒՔԱ. — (Վախեմ ձեռքը արտիւն վրայ կը դնէ): Հա՛յր, Որդի՛, Հոգի՛ Սուրբ, դո՛ւք օգնութեան եկէք: (Թիկնաբոկիմ մեջ կիյնալ). գէշ կըլլամ կոր... պիտի մարիմ...:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ո՛ւր էք, Ժա՛ն, Ժա՛ն, (կը պօռայ) Ժա՛ն, Բիէ՛ր, (զանգակը կը հնչեցնէ):

ԼՈՒՔԱ. — Ա՛յ... ա՛յ... տեսա՛ր մի փորձանքը... ամէնքն ալ դաշտ գացին ելակ ժողովելու: Տանը մէջ մարդ մարդասանք չկայ... ո՛ւշ, ո՛ւշ... գէշ կըլլամ կոր... քիչ մը ջուր:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Բռնուցնելու ցուցնելով, ոտքերը գետնի վրայ կը զարնէ) շուտով դուրս ելէք:

ԼԱՅԼԱՆՇ. — Խնդրեմ, Տիկին, քաղաքավարութեամբ վարուեցէք ինծի հետ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Խըմալրին, արջին, հրէշին մէկն ես:

ԼԱՅԼԱՆՇ. — Ի՞նչ, ի՞նչ ըսէք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Կըսեմ ու կը կրկնեմ. Խըմալր մըն ես, արջ մըն ես և հրէշ մըն ես:

ԼԱՅԼԱՆՇ. — Ի՞նչ իրաւամբ կանուանարկէք կոր զիս, Տիկին:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Այո՛, կանարգեմ, ի՞նչ պիտի ընես, կը կարծես որ կը վախնամ քենէ:

ԼԱՅԼԱՆՇ. — ... Եւ անանկ կը կարծէք որ իբրեւ եթերային, բանաստեղծական էակ անպատիժ՝ կրնա՞ք անարգել մէկը, բընա Տիկին, և հիմալընէ զձեզ մենամարտի կը հրաւիրեմ:

ԼՈՒՔԱ. — Հայր Սուրբ, Հոգի Սուրբ... գաւաթ մը ջուր տուէք:

ԼԱՅԼԱՆՇ. — Պիտի մենամարտինք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Կը կարծես որ կը վախնամ քենէ, վասն զի գեղջուկի բռնեցքներ և եզան թռքեր ունիս, կոպիտին, արջին, հրէշին մէկն ես:

ԼԱՅԼԱՆՇ. — Պիտի մենամարտիք, չեմ ներեր որ մէկը զիս անարգէ, ըլլայ նոյն իսկ անկարելու մէկը, կին մը:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Ձայնը բարձրացնելով). Ս՛րջ, ա՛րջ, ա՛րջ...:

ԼԱՅԼԱՆՇ. — Այո՛, Ժամանակ է ա՛լ որ քիչ մը կնիկներն ալ վարժուին իրենց բերնէն ելածին հաշիւը տալու, սեռերու հաւասարութիւն կը պահանջէք, է՛հ ե՛ս ալ կը պահանջեմ պիտի մենամարտինք և անմիջապէս:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Անմիջապէ՛ս, կինդունիմ, ամուսինս ընկողնէնք ունի, երթամ առնեմ (դեպի դուռը կուղլուի, բայց անմիջապէս ետ դառնալով). — ա՛հ, չե՛ս գիտեր, չե՛ս կրնար երեւակայել թէ ի՞նչ հաճոյքով սա մետաղէ՛ գլխուդ գնտակ մը պիտի տեղաւորեմ:

ԼԱՅԼԱՆՇ. — Հաւի մը պէս պիտի մորթեմ. ո՛չ ստահակ մըն եմ և ո՛չ ալ զգայուն դպրոցական մը... ինծի համար տկար սեռ չկայ:

ԼՈՒՔԱ. — Հայր Սուրբ, Որդի Սուրբ, Հոգի Սուրբ, դո՛ւք սրվոր հախեմ եկէք, (Լաբլանցի առջեւ ծուկի գալով) կաղաչեմ, կը պաղատիմ, գթացէք ինծի պէս խեղճ ծերի մը վրայ, մեկնեցէք, մեկնեցէք: Այնքան վախցուցիք զիս որ տակաւին ոտքերս ձեռքերս կը դողան կոր, ինտո՛ր Տիկինին հետ ձեր մենամարտիդ տեսնամ և դող չելլամ:

ԼԱՅԼԱՆՇ. — (Առանց մտիկ ընելու).

Մենամա՛րտ մը, սեռերու հաւասարութիւն, կնոջ ազատագրութիւնը հո՛ւս է ահա, առանձնաշնորհում չկայ ալ, սկզբունքս ի գործ դրած ըլլալու համար միայն ատրճանակս վերան պիտի պարպեմ: — Ի՛նչ կին, ի՛նչ կին: (Կապկելով) «ա՛հ, չես գիտեր, չես կրնար երեւակայել թէ ի՛նչ հաճոյքով սա մետաղէ գլխուդ գնտակ մը պիտի տեղաւորեմ»: Ի՛նչ կնիկ ... այտերը կասկարմիր կտրեցան, կարմիր վարդ մը. հապա աչքերը, վառարան մը կարծես, տասներկու կնիկ ձգեցի, ինն կնիկ ալ զիս լքեցին, բայց ասանկ մէկ հատ մը չգտայ:

ԼՈՒՔՍ. — Ա՛հ գացէ՛ք, Տէր իմ, գացէ՛ք, մինչեւ վերջին շունչս ձեզի համար պիտի աղօթեմ:

ԼԱՅԼԱՆՇ. — Կնիկ ըսածդ ալ ասանկ պէտք է ըլլայ, ասանկ կնիկ մը կը հասկնամ, ճշմարիտ կին մը ... կրա՛կ, բո՛ց և կատաղութիւն: Իրաւ որ մեզք պիտի ըլլայ զայն մեռցնել:

ԼՈՒՔՍ. — (Կուլայ). — Տէր իմ, գացէ՛ք, գացէ՛ք:

ԼԱՅԼԱՆՇ. — Սիրեցի՛, լմնցա՛ւ, այո՛, հակառակ փոսիկաւոր այտերուն, խորոժեցայ, նոյն իսկ պատրաստ եմ էրկանը պարտքէն հրաժարիլ, ի՛նչ տարօրինակ կին:

Է. ՊԱՏԿԵՐ

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Երկու ձեռքերը մէյնիկ յիմարտ): Ահա՛ զէնքերը. բայց կռուելէ առաջ պէտք է ինծի սովորեցնէ՛ք թէ ինտոր գործածելու է զանոնք, կեանքիս մէջ երբեք զէնքի ձեռք դպցուցած չեմ:

ԼՈՒՔՍ. — Յանուն Հօր Յիսուսի Քրիստոսի, երթամ պարտիզպանը և կառապանը կանչեմ, Աստուած իմ, աս Սողոմ-Գոմոր փորձանքը ո՛ւրկէ էր մեզի խրկեցիր: (Կը մեկնի):

ԼԱՅԼԱՆՇ. — (Ձեռքերը բնկելով) ահա՛, Տիկին, այսպէս պէտք է բռնել. (մեկուսի) ի՛նչ աչքեր, ի՛նչ աչքեր, ի՛նչ հրձիգ կին:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Ասրեանակը առնելով). — Ասանկ բռնեմ:

ԼԱՅԼԱՆՇ. — Այո՛, ա՛յսպէս, յետոյ չնիկը վեր կառնէք, նշան կառնէք, գլուխնիդ քիչ մը ետեւ կը տանիք, թեւերնիդ ու-

ժով կը բռնէք, ա՛յսպէս ... յետոյ մատովնիդ բլթակը կը քաշէք, եղաւ գնաց, բայց նախ պէտք է որ պաղարեամբ և առանց առճապարելու նշան առնէք, ուշադրութիւնը բէ՛ք որպէս զի ձեռքերնիդ չդողայ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Մի վախճաք, միայն թէ սենեակին մէջ գիւրին չէ մենամարտիլ, պարտէ՛դ ելլանք:

ԼԱՅԼԱՆՇ. — Երթա՛նք, բայց առաջ ուրնէ ձեզի ըսեմ որ ես օղին մէջ պիտի պարպեմ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ինչո՞ւ:

ԼԱՅԼԱՆՇ. — Վասն զի ... վերջապէս ստիկա իմ գիտնալիք բանս է:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Կը վախճաք կոր ... հա՛ ... ո՛չ պարոն ինծի վարպետութիւն մի ծախէք, անմիջապէս մենամարտելու ենք. միայն ա՛յն ատեն պիտի հանդարտիմ երբ սա երկաթէ գլուխնուդ, գնդակս զետեղեմ, սա անիծեալ գլուխնուդ, ըսել է կը վախճա՛ք կոր եղեր ...

ԼԱՅԼԱՆՇ. — Այո՛, կը վախճամ կոր:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Սուտ կը խօսիք կոր, ի՛նչու մենամարտիլ չէք ուզեր կոր ...

ԼԱՅԼԱՆՇ. — Վասն զի ... վասն զի ձեզմէ կախորժիմ կոր:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Ձառ ծիծաղով մը) Պարոնը ինձմէ կախորժի կոր եղեր ... և կը յանդգնի կոր ինծի ըսելու թէ ինձմէ կախորժի կոր. (դուռը ցոյց տալով) գացէ՛ք շուտով: (Լաբլանց առանց պատասխանելու ասրեանակը սեղանին վրայ կը դնէ, գլխարկը կառնէ եւ կուղղուի դեպի դուռ. մեկ քանի վայրկեան դրան առջեւ կը մնայ, իրարու կը նային, յետոյ դանդաղ քայլով մը կը վերադառնայ):

ԼԱՅԼԱՆՇ. — Սրդողա՛ծ էք ... հապա ե՛ս, կատաղութենէս ինքզինքս կուտեմ կոր, բայց տեսէ՛ք, ինտոր ըսեմ ... այս բոլորը ... (կը պօռայ) ի՛նչ ըսեմ յանցանքը ի՛մս է եթէ զձեզ կը սիրեմ ... (աքոռ մը կառնէ եւ կսոր կսոր կընէ) այս ի՛նչ ալ դիւրաբեկ կուրասինեմ ... կախորժիմ կոր ձեռնէ, կը հասկընա՛ք ... գրեթէ սիրահարուած եմ ձեզի ...

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Մի՛ մօտենաք, զձեզ կատեմ:

ԼԱՅԼԱՆՇ. — Աստուած իմ, աս ի՛նչ

կին, տասներկու կնիկ ձգեցի, ինն ալ զիս
լքեցին, մէկ հատ մը աստիճանիկ չգտայ ...
մուկի պէս թակարդին մէջ բռնուեցայ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Մի՛ մօտենաք, հիմա կը
պարպում:

ԼԱՅԼԱՆՇ. — Քաշեցէ՛ք, զարկէ՛ք ...
չէք կրնար երեւակայել թէ ի՞նչ մեծ հաճոյ-
քով պիտի ուզեմ մեռնիլ նայուած քնեմնուդ-
տակ ... մեռնիլ սա ձեր թաւշեայ փոքրիկ
ձեռքովը քաշած գնդակէն: Յիմարութիւն
կուգայ կոր վրաս ... մտածեցէք և որոշում
մը տուէք, վասն զի եթէ հոսկէց մեկնիմ,
ա՛լ մէյ մըն ալ զիրար չպիտի տեսնանք: Ո-
րոշեցէ՛ք ... ես ազնուական մըն եմ, 1500
ոսկիի եկամուտ ունիմ ... և յետոյ սքան-
չելի նշան առնող մըն եմ — կրնամ նոյն ի՛սկ
օդին մէջ նետուած տասնոցին նշան առ-
նել ... սքանչելի ձիեր ունիմ ... կուզէ՛ք
կինս ըլլալ:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Կը բարկանայ ռիվօլի-
րին փողը ջողացնելով) Պէտք է մեծամար-
տի՛նկ և հի՛մա:

ԼԱՅԼԱՆՇ. — Հիմա կը խեղճեմ ...
(Կը պօռայ) ո՛վ կայ հո՛ն, քիչ մը ջուր բե-
րէք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Կը պօռայ) Հիմա՛, հի-
մա՛, անանկ բան չկայ:

ԼԱՅԼԱՆՇ. — Խեղճեմա՛ս բան մը չէ,
յիմարի մը պէս, դպրոցական տղու մը պէս
սիրահարուեցայ... (Տիկինին ձեռքը անա՛նկ
ուժով մը կը բռնէ որ՝ Տիկինը ցաւէն կը
պօռայ) ա՛հ ... կը սիրեմ ձեզի (ծուցկի կու-
գայ). կեանքիս մէջ ձեզի չափ մէկը սիրած
չեմ ... տասներկու կնիկ ձգեցի, ինն ալ
զիս լքեցին ... անոնցմէ ո՛չ մէկը այնչափ
սիրեցի որչափ զքեզ կը սիրեմ ... կը տես-
նաք կոր որ կը հիւժիմ, կը լմնամ, հապը կը
կլլեմ կոր, կը տեսնաք որ տղու մը պէս ծըն-
կաչոք, սիրտս ձեզի կը նուիրեմ, իրաւ որ
կամենամ կը խաչիմ կոր, հինգ տարի շարու-
նակ ո՛չ մէկը սիրել, և երգում ընել մէյ
մըն ալ սիրոյ ապուրը չխառնել ու հիմա ...
Աստուած իմ, հիմա՛ տաւանակի պէս բռն-
նուիլ ... կուզէ՛ք իմ կինս ըլլալ, այո՛ կամ
ո՛չ ... չէք ընդունիր ... աղէ՛կ: (Ոսփ
կելլայ եւ արագ քայլերով դէպի գուռ կուղ-
ղուի):

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Վայրկեան մը ...

ԼԱՅԼԱՆՇ. — Հրամայեցէ՛ք:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Ոչի՛նչ, մեկնեցէք ...
չէ՛, կեցէ՛ք ... մեկնեցէ՛ք ... կատեմ ձեզ,
... ո՛չ ո՛չ կեցէք, ա՛հ եթէ գիտնայիք թէ
որչա՛փ որչա՛փ կը կատարեմ կոր, (Րիվօլի-
րը սեղանին վրայ կը դնէ), ա՛ս ալ մասնեւ
ցաւցուց (բարկութեան քաշկիմակ մը կը
պատռէ): Ինչո՞ւ դիմացս պատի պէս ցցուեր
մնացեր էք, չմեկնի՛ք:

ԼԱՅԼԱՆՇ. — Մնաք բարով:

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Երթա՛ք բարով (Կը պօ-
ռայ) բայց ո՛ւր կերթաք, կեցէք, ո՛չ ո՛չ
գացէք, որչափ կը բարկանամ կոր, մի մօ-
տենաք, մի մօտենաք:

ԼԱՅԼԱՆՇ. — (Քովը գալով) Հապա հո՛ս,
ըլլալի՛ք բան է այս, դպրոցականի մը պէս
բռնուիլ, ծուռգի գալ, ... (կատարութեամբ)
կը սիրեմ զձեզ և կերպնում որ չը սիրէք ալ
նէ շատ աղէկ կըլլայ ... վաղը պարտքիս
տոկոսները պիտի տամ, ցորենները ժողովելու
սկսանք, դիմացս ելլալու ատենն էր հիմա,
(գրկելով) ըլլալի՛ք բան չէ որ այլեւս համբ ...

ՏԻԿ. ԷԼԷՆ. — Մի մօտենաք, մի մօ-
տենաք, կատեմ ձեզի, կատեմ, երթանք մե-
նամարտի՛նք:

ԼԱՅԼԱՆՇ. — (Կը համբուրէ Տիկինը,
որ գրեթէ չդիմադրէ):

Ը. ՊԱՏՏՆԵՐ

(Նոյնները, յետոյ Լուսան, պարսիկապանը,
կառապանը, ձեռքերին բահ, բրիչ, նետ
կը մտնեն):

ԼՈՒԻՔԱ. — Հայր Սուրբ, Որդի Սուրբ,
Հոգի Սուրբ ...


ՏԻԿ. ԷԼԷՆ. — (Աչքերը խոնարհեցնելով)
Լուքա՛, ըսէ՛ կառապանին որ այսօր թօպիին
բնա՛ւ գարի չտայ:

ԱԴՈՆԻՍ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԱՂԶԻԿ ԿԱՐԳԵԼՈՒ
ԷՆ ԲՈՒԱԹԻԿ ՄԷԹՈՏԸ

ՆԵՐՇԱՊՈՒՂԷ



ԽԱՌԱԽԱՆՃՕԼՕՁԸ

Թէեւ սխալ միջոց, սակայն մինչեւ հիմայ մայրեր և կամ բառամանաներ երբ իրենց գիրկի պղտիկները սաստել ուզեն՝ խառախանձօզը կուգայ կոր կ'ըսեն և այսպէս տղուն վախ ազդելով կը յաջողին արցունքը աչքէն, ձայնը բերնէն դադրեցնել: Տղուն մինիսիկ մտքին մէջ խառախանձօզի վախը այն աստիճան արմատացած է որ, առանց այդ երեւակայական և մտացածին բառին ինքնութիւնը տեսնալու՝ լոկ խօսքէն կը վախնայ, կը դողայ և կ'գաստանայ:

Հին օրերէն մինչեւ այս տարի գործածուած այդ երեւակայական բառը, շնորհիւ Եւրոպական խելացի գիւտերուն (?) մարմնացաւ և ահա այս օր դժուար չէ, հոս հոն, ձեր ճամբուն վրայ հանդիպիլ իրական խառախանձօզներու, որոնք ոչ թէ միայն պղտիկներու, այլ նոյն իսկ մեզի պէս սատանայէն չի վախցողներուն անգամ ահ ու սարսափ կ'ազդեն կոր:

Նիւթը հասկցաք անշուշտ, օրուան գըլխարկներուն համար է խօսքս: Մինք, էրիկ մարդիքս, հինգ դրուշ կուտանք կ'ածիլուինք և մաքուր կոկիկութիւն մը կ'ստանանք, կ'ինքը տասը դրուշ կը վճարեն տուփ մը բուտոա կը գնեն, կը քսուին և... մեռել կը դառնան: Մինք, երեք ոսկի կուտանք քօսթիւմ մը կը շինենք և որով մարմիննիս բարեձեւ ֆոռմ մը կ'առնէ, կ'ինքը 3—10 ոսկի կը վճարեն մօտիսթին, կեր-

պասին ու երբ հագուելու ըլլան քառիքաքիւռ կը դառնան և ծաղու առարկայ: Մենք 10—15 դրշ. կուտանք գդակ մը կը գնենք որ գլուխնիս ծածկելով տարբեր վայելչութիւն մը կուտայ մեր դէմքերուն, կ'ինքը 3—4 ոսկի կը վճարեն գլխարկ մը կապել կուտան և կըլլան... խառախանձօզ:

Ցաւալի վիճակ չիտակը ըսելով. այն կիները որոնք իրենց բնատուր գեղեցկութեանը այր մարդուն սիրտն ու սէրը գրաւելու կոչումն ունին, այս օր շնորհիւ արտառոց գլխարկներուն, պիտի լքուին, պիտի կորսնցնեն իրենց հրապոյրը, ձրի ալ չէ... ոսկիներով:

Օրուան գլխարկներուն վրայ այսքան մը խօսելէ վերջ, հաճեցէք ինձ հետ պահ մը գլխարկավաճառի խանութ մը մտնել, մօտէն լսելու համար այն չըլլալիք խօսակցութիւնները, որոնք կ'անցնին ձմեռնամուտի այս այս օրերուն մեր Հայ կ'ինքերուն մէջ, որոնք կ'իւրիւֆ կ'իւրիւֆ հող մը դիմեն՝ բանէ պահաւ չմիալու համար:

* * *

Տեսարանն է Բառէի վաճառատունը:

Ասեղ ձգելիք տեղ չիկայ, Պոլսոյ բոլոր արուարձաններէն, խօսք մէկ բրածի պէտ այդ օրը եկած խոնուած են ի խնդիր նոր և նորաձեւ գլխարկի, որոնք Ֆոլքսթրանդ պէս կը դառնան խանութին մատմաղէնքը և նրբաւարտ թաթիկներուն և մատիկներուն:

Պոռն վրայ, չողիկ վազցնել տալով տիրող հարիւրաւոր աչքերու:

— Բարեւ Տիկ. Կալիպսո, դ՞՞ռք ալ աս օրին մնացեր էք... կը հարցնէ տիկին մը որուն վէլօն երեսին փակած էր՝ խալպուրի պէս ծակ ծակ:

— Աստուծոքորին քուրուկ, աֆ կընես, պիրսին պիրէ չի ճանչցայ... աս օր երկուշաբթի է շատ մարդ չըլլար ըսի ելայ եկայ ամա... գիտես քի բիւթիկնալ իմ օրիս խօսք մէկ ըրեր են...

— Էյ նաւըլ, պարէ կուտուրու բան մը ուշտուրի կըցա՞ր ընկու...

— Քա ճանըմ, որ շաբաթս կը դնեմ կոր նէ՛ց ուղանկ կը պառնամ կոր... պիր մուսքիւն երեսիս վալլում ֆօռմա մը չկըցի գըտնալու:

— Սուս, սուս, մենք ալ անանկ, որ սահաթ է խուռու խալվէճի տիւպէկի պէս մէկը կը դնեմ մէկալը կը վերցունեմ կոր, կէնէ պօշ կէնէ պօշ...:

— Քուրուկ, սըտեղը մէկ հատ մը հաւնեցա՛յ ամա, բէք խօռօզ իպիյի պան է, էյ քիչ մըն ալ տարիքիս կէօրէ ըլլալու չէ՛ մի ես՝...

— Աման հոգը՛դ, աստեղը չորս հատ թռոնները թաղող մենծ մամեր կան քի՛ չի՛վիտի մալի իլէն կէլինճիկի ալ ըռէնկները կլոխին կը դնեն կը պտըտին կոր, տահա տուր պագալըմ... մենք ուր կը մնանք...

— Աղէկ կըսես հոգիս ամա՞, գիտես ես իմինըս քիչ մը իլիմօնի է, վրաս ճառթ բան մը տեսնալու չէ, կէօյեամ քի ըռէնկեամուզ բան մը դնելուս պէս, բիւթիւն ասնողները ինծի կը նային եղէր...

— Սուս, սուս, մէկ ծարն ալ իմ կլոխս է, ճանճ մը պիլէ չուզեր քի վրաս թառի, ամա ի՛նչ ֆայտա, պաղնեց ելածի պէս սօխախ չես կրնար ելլար ա, ուռուսումը ի՛նչ է նէ տեղը պիտի գրուի...

— Քա ոտքդ պագնեմ քուրուկ, սա կէնճին դրած շաբաթս նայէ... հիմա խելքիս կուգայ...

— Իշտէ աս տարուան մօտաններէն է, բիւթիւն աս տարուանները աստանկ քօքօռ թալը բաներ են...

— Քա առջի պերսն գիտցայ քի քիւֆէ մըն է կլոխը դրածը...

— Էյ սանքի անկէ վար չի մնար, հիմա աս շաբաթներէն առնենք նէ արգել հալայի հիչ շէմչիյէ բանալ չուզեր...

— Էյ վայ մեղքիս, ատտարն ալ բէք եռմուռճախ կերեւայ կոր...

— Եռմուռճախ մուսուռճախ, մօտայէ նէ, առնենք դնենք պիտի, ըսելով խանութպան օրիորդի մը կը մօտենան...

— Պագսանայ մատմաղէլ, իքիմիլին տէ պաշընայ պիրէր շաբաթ իսթէրիզ ամա, պաղքի է՛ն սօն մօտալարտան օլտուն...

— Բէք էյի մատամ, պուլուրունըզ, սօն մօտա պիր հաանթիյյօն, ցօգ կիւզէլ, պունտան թիպիլիսի վէրտիմ մատամ կօռտօմաթիտիս, նա սիմտի...

— Ծանցա՛ր քա, գիտես քի միւր պախալ Եօռկիին կնկանը համար է, գէրէ ան ալ ասոր մօտ բան մը գըրեր էր...

— Էյ մէյ մը կլոխդ անցուր նայինք, սուռաթըդ դուրս պիտի տա՛յ... կըսէ ընկերուհին:

— Մագերս ալ հովէն ալթ իւսթ եղան, եղան, ամա նէ իսէ: կըսէ ու հայելին դէմը անցած գլխարկը գլուխը կը դնէ:

— Ոտքդ պագնեմ, գիտեմ քի պալըխճիլ թապալա առի կլոխս, խուռչին, խուռչին:

— Էյ հա՛ ամա, իշտէ սօն մօտա է, ի՛նչ պիտի ընես, մէկ երկու անգամ մը դնելու ըլլաս նէ, ալըշմիշ կըլլաս կերթայ, տեսնողն ալ նոր մօտա գըրեր է կըսէ՛ ես՝...

— Աղէկ կըսես ամա, աճապ սա վրայի գօգօթանները հանել տամ նէ չըլլա՛ր... կըսէ տիկինը միշտ հայելին նայելով:

— Ցօգ կիւզէլ եագիստի մատամ, սըմառլամա կիպի օլտու, հէմտէ պիլերսինիզ քի եասինիզ տահա կէնճ կէօթէրիօր...

— Իրա՛ւ է քա, ես ֆառլին չեմ ամա՞...

— Հիչ մի նայիր տէ ուշտուրմիշ ըրէ, սըխըտարը քեզի ըսեմ քի, սուռաթըդ գիտես քի պարկէնկի պէս չէրչիվէյին մէջը առին...

— Ատտար աղւորցուց նէ բէք գործիս չի գար, Յաբէթ աղան գիտես ես, ֆուռթունա կը հանէ եանի...

— Դուն իմ խօսքիս նայէ քուրուկ, քիչ

մըն ալ սիւսէրնուս իյնանք, հիմակուան զան-
ցան ասանք կը վերցունէ կոր. պագսանայ
մատմադէլ, պէօյէ թըպկըսը պանա տա պիր
թանէ չըգար, պէնտէ ալաճաղըմ ...

— Բէք էյի մատամ, ֆազաթ, պունըն
կիպի տէյիլ, օ պասկա ռէնկ, ցիւնքիւ հսան-
քիյօն ...

— Աս երկու լախըտըրն մէկը էշ առիօն
տէյի բաներ մը կը լըվըոցունէ կոր, չիլլանք
խաբուինք քա քուրո՞ւկ ...

— Չէ՛ ... տիւմանը վրան շարխաներ
են, չէ՛ ... ան քիւ պիլիր աս ֆօռմային
անո՞ւնն է՛ ի՞նչ է ... :

Եւ նոյն ատեն օրիորդը ուրիշ գլխարկ մը
տուփէն հանելով իրենց կը ներկայացնէ և
կսկսի քուքլայի պէս մատներուն վրայ դար-
ցընել :

— Պաղինիդ մատամ, պէօյէ պիր մալ ...
սօն մօտայ ...

— Մէյ մը դիր նայինք, քեզի ինտո՞ր պի-
տի երթայ, հէմ քեզի աղէկ պիտի ըլլայ,
չիւնքիւ սուռաթըղ օսկօնու է, ինչտար
շարխաթ մենծ ըլլայ նէ զարար չունի ...

— Ը՛նհ ... աճապ ասա՞նկ էի ... դաւ-
կիս կսկիծը իս օսկօն տէրի ըրաւ ...

— Նէ իտէ, հիմա գոցէ ատ տէֆթէրը,
սանկ այնային առջին եկուր տէ բօօվա ըրէ,
դէշ ապրանք չէ հանածը ...

Ու երբ տիկինը փորձի համար գլուխը
պիտի դնէր, յանկարծ ընկերը զայն կեցնե-
լով ...

— Երկու լուսերնին քէօռնայ, մերէրար
քա ...

— Վույ վախնամ պէօճէկ կայ ...

— Պէօճէկ ըլլայ նէ խայիլ ես ... բաթ-
լամիշ ըլլան, հէմ ալ խույրուխլու սօյէն ...
կայնէ մերէրար ...

— Նէ վար մատամ ... նէ օլմուս, կը
հարցնէ օրիորդը շուարած ...

— Նէ օլաճազ, կռողը տանի, բախլայի
խըտար ոջիլ մը ...

— Աստուծու կրակին կաք հէմէն, ըսե-
լով գլխէն կը հանէ և մէկ կողմ կը նետէ
գլխարկը :

— Քա ի՞նչ պիտի ըլլայ, տիօր իրինկուն
հազար կընիկ կուգան, բօօվա տէյի կլոխնին

կը դնեն կը վերցունեն, քիւ պիլիր որ բիսին
վրայէն ցատկեր է ...

— Վախ վախ վախ, պարէ երկու օրուան
բաղնեց ելա՞ծ ալ չըլլայի ...

— Պագսանայ կըսէ տիկինը, պու վայ-
լո՞ւմ չէյ իտի քի օլտու ...

— Ձարար եօգ, ուֆազ սէյ, սիգէ պաշ-
կայ ցիգարայիմ, պրաղինիդ ծնու, ըսելով կը
մեկնի ուրիշ մը բերելու համար :

— Ամա չօգ չէ՛յ, էօմրիւս մէջը ասանկ
ոջլոտ շարխա չէյի տեսեր ...

— Նա պագինիդ մատամ, սօ՛ մօտա,
չիք, թիպքի ծնըն կիպի ըսելով օրիորդը
ուրիշ մը կը ներկայացնէ :

— Միւրուս ալթիւսթ եղաւ, եռմուռճա-
խէն չեմ կանիր, ոջիլ ըսին մի, ներսիդիս
չօրպա կըլլայ ...

— Էյ աման դուն ալ, վազ եկուր, բան
մը քի եղաւ, նա սա բերածը գէշ չէ, մէյ
մը դիր տէ նայէ նա՞յինք ...

Գլխարկները կը հաւնուին, կարգը կու-
գայ սակարկութեան :

— Էյ սէօյէ պագալըմ, նէ վէրէճէյիդ ...

— Իւցէր պուչուգ լիւռա մատամ, սօն
ֆիյաթ ...

— Օ՛խ ... նոր հարս ըլլալու չէի ...
վա՛յ մեղքիս, իրեք ու կէս օսկի տա՞մ նէ,
Թօփխաբու երեք օտալը տուն մը կառնեմ ...

— Էյ կրակի գին, կրակի, կըսէ ընկե-
րուհին, մինչ նոյն պահուն ուրիշ ընտանիք
մը փորձի համար կուգան հայելին նայիլ ի-
րենց նոր գլխարկը դրած ...

— Նա քա, զահէր մօտան ասանկ է, ա-
սոնք ալ թօփ սալաթավարի շարխաներ մը
կը նային կոր ...

— Տահա ուճուզլար տա վար մատամ,
ամա պու սաքալար սօն մօտա հսանքիյօն...

— Կէնէ ատ լաֆը քըչեց քա, սուր
պերնին չափը տամ պիտի, ի՞նչ կըսես ...

— Պէլայի մի մանար քա քուրուկ, զա-
թը աս առտու եաղլըշութրնով չօրպաներս
թէրս եմ հագէր, չիլլայ փորձանք մը զայ
գլխինիս ...

— Սա խըռֆածը նայէ, մայմուն սու-
ռաթին ալ ինտո՞ր վալլեց պողատայ քիւֆէսի
շարխան, ամա ի՞նչ է, ներսիդիի օղդը չէ
սատկեր ան է, էրկանը չիբին պիտի երեւայ :

բօստալը, սա նայէ ինտոր կէտտան կը կոտ-
րէ կոր ...

— Հիմա մենք մեր տէրտը նայինք, գի-
տես քի սա շաբխաները եռմախ ըրին սիր-
տիս մէջը դրին, պագսանա, պիր ազ վար
սօյը եօգ մու ... կըսէ իշ պիլիր տիկինը,
օրիորդին դառնալով:

— Վար, նասըլ եօգ ... սիզին փարա-
նիզա կէօրէ մալ ցիգարայըմ մատամ ...

— Տեսա՞ր վըռթկածը, ճէպերնուս փա-
րան պիլէ գիտէ կոր ... քա դուն եսպան-
ճի չես տէ անոր համար կըսեմ, վրաս էվէլ
փարայ կա՞յ ամա՛, երկու օսկիս կը պակսէ
կոր քի Յակոբ աղային տամ տէ օղերս ըռէ-
հինէն վերցունեմ ...

— Հա՛ ... ան պաշխա, ես քու տեղդ
ըլլամ նէ կազ պոյամասի մը կը կապեմ տէ
պարտքս կուտամ, գիշերն ալ Ֆըշըր Ֆըշըր
ըռահաթ քուն կը քաշեմ ...

— Քա քուրուկ, ես ալ ատ հավէսին եմ
ամա, էրիկ օլաճախս քիչ մը ուշարի է. կը-
տոր մը կուստոյէս իշնալու ըլլամ նէ, խա-
ֆէսի խուշի պէս չըռընմիշ կըլլայ տէ աշկը
դուրս կը ձգէ, անոր համար կուզեմ քի տա-
յիմա աշկին եալապուլս երեւամ ...

— Էյ ատտեղն ալ դուն հախ ունիս, ա-
նանկ է նէ, վեր վար ույտուրմիշ ընենք տէ
առնենք, մէկ երկու օսկիին համար եռվադ
մաւեր:

Մինչ այս մինչ այն, մեր զոյգ անթիքա-
ները, դարձեալ նոյն ֆօռմայով, սակայն քիչ
մը վար տեսակ գլխարկներ գնելէ վերջ հի-
ները բաքէթ՝ նորերն ալ գլուխին կանցնեն
և դուրս կելլան խանութէն, ուշ ատեն տուն
դառնալու համար:

— Էյ քիչ մը հեռուէն քալէ ճանըմ, քու
գօգօթաներդ իմիններուս կը դպչի կոր ...

— Քա ճանըմ, տիխաթ ըրէ քիչ մը, որ
սահաթէ ատ բանը ես քեզի պիտի ըսեմ,
թիւշերս իլէն քօռտէլաներս եօխ եղան ...

Նոյն պահուն յանկարծ սաստիկ հով մը
կելլայ, և մեր նազնիմներուն գլխարկները
կսկսին առազատաւորուիլ:

— Ոտքդ պագնեմ քուրուկ, հավալան-
միշ կըլլամ կոր ...

— Քա աճապ օա բաքէթիս սիճիմը հա-
նէմ տէ շաբխաս կապեմ, կելլայ, կելլայ կը

նստի կոր կլուս վրայ ... չելլայ հավա-
լանմիշ ըլլայ քա՛ ...

— Աման դուն ալ, սաղ ծառքովդ սըխը
մը բռնէ ինծի պէս ...

— Քա ֆուռթունայի պոնուած կէմի-
դաոցայ, աճապ թռանվայ մը ցատկե՛նք ...

— Էյ հայտէ աղէկ ըսիր, ըսելով հան-
րակառքին կը ձայնեն որ խկոյն կը կենայ:

— Դուն սա բաքէթներս բռնէ ես ներս
մտնամ տէ, ետքէն ես ալ քու բաքէթներդ
կառնեմ, կըսէ տիկիններէն մին և ներս կը
մտնայ: Ու հազիւ թէ ներս մտած թէ չէ,
հոն նստող ծերունիի մը ակնոցը վար կը
ձգէ, որ ցրելս ցրելս կըլլայ:

— Ա՛ ... նասին կէօռմէյօռուուկ մա-
տամ ... պէն կէօզլիւկ նասին օլաճագ ...
կը տուտայ ծերունին:

— Ա.ֆ. էտէրսինիզ միւսիւ, մագսուս
եարմատըմ, շաբկամ մօտա պիլիմ տիր, չիմ-
տիք ալարմ տա, խուշունը տահա պիլմէյօ-
րըմ ... դուն ալ եկուր նստէ քա, տիխաթ
ըրէ, փորձանքի մըն ալ դուն չի հանդըպիս...

— Նստիմ պիտի ամա, քովդ նստելուս
պէս չպիտի ըլլայ, շարխանիս իրարու պիտի
դպի աւրուի պիտի ...

— Աս ի՞նչ փորձանքի հանդիպեցանք
փարայովիս ... չօգ չէյ, նստէ ճանըմ ի՞նչ
ընենք, բան մը քի եղաւ կըսէ ընկերուհին
և միւսն ալ կուգայ կը նստի, անհանգիստ
ընելով քովի նստողները, որոնք կսկսին գան-
գատիլ ֆօնթիւքօնին:

— Ա.ֆ. էտէրսինիզ մատամլար, շաբգա-
նըգտան միւշտէրիլէր պէօհիւղիւր օլուեօր-
լար ...

— Էյ նէ եաբալըմ, պիզ իճատ էթմէտիք
եա, սիզին Պէյօղլունըզըն մօտասը ըմըշ,
պիզտէ ալուճ ըլան փարայ վէրտիք ալտըգ...

— Էյի ամա պիր բայթօնա օթուրայը-
տընըզ ...

— Քա սուտ չէ սանքի, ասանկ գօգօռ-
թալը շաբխաներով մարդու մէջ մտնելիք
բաներ չեղանք ...

— Քա աս ի՞նչ պէլայի մտանք, սուս ե-
ղիր տէ հէմէն սօխախին պէրանը վար իշ-
նանք, գէրէ անանկ կերեւայ կոր քի տահա
չատ զիյան պիտի տանք, հէրիֆին կէօղլիւկը
տարմատաղին եղաւ ...

Վերջապէս մեր զոյգ տատրակները հազար դժուարութիւններով տուններին կը հասնին, որոնցմէ մին երբ դուռը կը զարնէ ու ներս կը մտնայ ... դուռը բացող պզտիկը սոսկում ձայներ հանելով՝ քիչ մը կանուխ տուն դարձող հայրիկին վրայ կը վազէ,

— Աման հայրիկս ... տուտուս կոխը խառախանօթօղ մը դրեր եկեր է ...

— Տէր ողորմեայ ... կայնէ նայինք օլլում, վեր գայ տէ նայինք ի՞նչ է ... ըսելուն չի մնար՝ Տիկինը, փորձանք գլխարկը տատանելով ներս կը մտնայ ...

— Բարի իրիկունն ձեզ, ո՛ւշ մնացի ...

— Տէր ... ուղեայ զճանապարհս ... տէր ողորմեայ, տէր ողորմեայ ... դուրս ելիր ...

— Ի՞նչ կայ ճանքմ, ինչո՞ւ կը վախնաք կոր ...

— Ոտքդ պահէն՝ դուրս ելիր, չօճօխները չիլլէթի տէր պիտի ըլլան ...

— Մեզայ Աստուած, ես եմ, ե՛ս մաքերնիդ ... չօգ չէ՛յ ...

— Աման հայրիկ, խառախանօթօղ մայրիկին կոխն է ելէր ...

— Քա ճանքմ լեղինին կը փրթի կոր, կընիկ հանէ տա խառախատան ...

— Էյ թամամ ... նա հանեցինք ... քա տահա նոր եմ առէր, մօտա շաքխայէն է ... տահա՛ նէլէր ... կըսէ տիկինը զարմացած ...

— Հա՛, շէօլլէ՛, ես պիլէ գացի եկայ նէ ... կտոր մը շէքէրով իլիմօն ըրէ տէ բեր խմնք, դժողքի սատանան պիլէ ատ հէվալէն կոխը չանցունէր քա, մէյմը այնան նայեցա՛ր ...

— Սօխախը հազար հատը տեսնաք նէ պերնի ճուր կը վազցունէք, հիմա ես դրի նէ խառախանօթօղ եղաւ ... հա՛ ...

— Կընի՛կ, ան սօխախը տեսածնիս սատանայի ձագեր ըլլանուն՝ աչքերնիս անոր կէօրէ ալըշմիշ կըլլան, ֆախաթ քեզի պէս բաթիգաները դնելու ըլլան նէ տեսողը տըրսէվէ կընեն, հասկցա՛ր ... Դուն ադ շաքխաթ պահէ տէ տղաքը բէք աղմիշ ըլլան նէ գլոխդ դիր, խառախանօթօղը կուգայ կոր ըսէ, թագիդէյին սուս կըլլան ...

— Բէք աղէկ ամա, հրամանքդ ալ պազի մէխանայէն ուշ հրամանս նէ, աս կոխս դնեմ անանկ դէմդ պիտի ելամ, իշտէ կը վերցունեմ կոր:

ԼԻԼԱ

Ո՛Ր ՀԱՅՐԵՐՆԵՐ ...

[ՅԱՆՅԵԶԻ]

Մերկեր աղա, իր ծեր հօրմէն յար լսացած երբաներով՝ խանի մ'անկիւն հարսացած, Արուարձան մը փառում կապրէր եկամուտով: Թաղին եւ մենծ ջոջ հեռէնի դարձաւ շուտով, Գիւղին ժամն եւ դպրոց դեռ չէր սրբում

վարձու, Զինք բնտեցին քաղական եւ հոգաբարձու: Բարեկամներ կ'ըսեն իրեն « առաջ ա՛ն կին, Որ ուռնանաս », մինչդեռ ինք աս առաջարկին կը ժրպսէր լոկ, մազերն ըսես ձեան պէս

ներմակ վաքսունն անձուկ գըլխուն եղեր եր ա՛լ վերմակ:

Լիւսն ըլլալով՝ ծառայ մ'ունէր սա՛ կիրակոս, Խոռո ալանջ, դասարկ գըլուխ, ճակասն

ախօս, Որուն պատօնն՝ երբոր աղան կանչէր « տա՛յ, — Մանաւանդ երբ փոքն ալ ըլլար փանի

մ'աղայ, — « Գնա՛ սա բեր », պատասխանել՝ « Ո՛րն արդեօք տէր »:

Եւ այս բանը երկար ատեն պի՛ս տէր՝ դեռ, երբ կիրակոս չըսար կըսուկ վերջ մ'ան բանին:

Օր մ'հիւր կուգայ ճիւղ իրեն պէս մեկն անբանին,

Որուն սակայն աղան կ'ընէր խիստ ատ յարգանք:

Այդ օր հոգին կ'ելլէ խեղին մեր դասարկ գանկ:

Սրնուկներու մեջինն ամբողջ բերեր եր վար, Ելեր, իջեր, որ իր աղան հարուստ երկար: Վերջին անգամ, երբոր յոգնած ալ՝ ճարմաս վար եր իջեր, խոնանոց որ ընէ ռահաք, Մերկեր աղա ձայնէ կըրկին, « Օղո՛ւլ, կեօ՛, Հօրս քսե՛ որ մեզի գայ աս երեկոյ »:

Կիրակոս որ՝ դողար ամեն անգամ վախուն, Մեծ պատուէր միտն իյնալուն ճիւղ այդ

պահուն, « Որ հայրերնիդ կանչեմ » կ'ըսէ, խախա,

խախա, Մինչ ապահար գիրար դիտեն հիւր ու աղա:

ԲԵՐԱ

ԴՍ.Հ.ԴՍ.ՀՍ.



Ուր Ամբակունքի երկրորդ
կտակագիրը բանալի ետք
կսկսի բարձրաձայն կար-
դալ ... Դանիելի գրին
եղանակովը :

ԱՅՍ ԻՄ ԵՐԿՐՈՐԴ ԿՏԱԿՍ Է. ՈՐ ԱՌԱՋԻՆԸ
ԿԸ ԶՐԷ ... ՅՆՅՈՒՂՈՎ ՄԸ .

Ո՛հ, ո՛հ, ո՛հ, ո՛հ, երեցս և բերեցս ո՛հ,
ըրած կտակներուս համար, անունս ոսկետառ
արձանագրուիլը կը մերժեմ ... բայց կ'ըն-
դունիմ արձաթատառ գրուիլը ... զեղազ-
րիչ Թահթաճեանի կողմէ :

Կը մերժեմ ու կը մերժեմ ու կը մերժեմ,
անունս թերթերու մէջ հրատարակուիլը ...
այլ կ'ընդունիմ եկեղեցիներու դուռը կախ-
ուիլը ... մահազդի մէջ չլլալու պայմանաւ :

Խնդրելով պիտի խնդրեմ նաեւ որ ամէն
մարդ չխօսի ըրած կտակներուս վրայ ...
բացի տօն օրերէ :

Ո՛հ, չեմ ուզեր որ զիս յիշեն ... այն
ատեն որ յիշողութիւնները խանգարած են...

Փող, թմրուկ չեմ ուզեր ... այլ ինձ
սագի խումբ մը :

Նոյն իսկ ձեր մէտքներուն դէմ կրնակս
պիտի դարձնեմ, այլ է եթէ ... կռան մեռսի
մը ըսէք որ տասը հազար ոսկի ըսել է ...
ըստ եւրոպացւոց ... :

* * *

Ուրեմն .

Sof. Թօփեանին. — 10,000 ոսկի, Արե-
ւելք լրագիրը այնչափ փայլուն վիճակի մէջ
բերած ըլլալուն համար :

Արեւելցի Գամերին. — 5,000 ոսկինոց
վիլլա մը՝ քիչ մը հանգստանալու համար,
ուրկէ պիտի կրնայ նաեւ դիտել պատուհա-
նէն՝ Օրուան նշանները :

Հրանց Ասասուրին. — Յ. Յ. Պարոնեանի
ուրուականը, որպէս զի իմ քեզնէ ... իր
ինքնակենսագրութիւնը :

Մամեանին. — Վարպետ սափրիչ մը և
մինչեւ կեանքին վերջը ապօնըման մը ...
խասապի խանութի մը :

Աղեփանդ Գանոսեանին. — Արտաշէս
Յարութիւնեանի բանաստեղծութիւնները ...
սրբագրելու համար, և աս ձանձրոյթին հա-
մար 2,000 ոսկի :

Աբրահամ Այվազեանին. — Կառք մը և
ինքնաշարժ ... ի հարկին Երուսաղէմ ալ
ճամբորդելու համար :

Սիմօն Գաբամանեանին. — Շիշ մը նի-
հարցնելու դեղ ... չիշին տակը ոսկի մը :

Զիճքե-Սարափին. — Այն պահերը դի-
տելու ... ակնոց մը :

Յ. Ալփիարին. — Նմանապէս :

Սիմօն Զեօմիէֆեանին. — Պանքայի մը
վարչութիւնը :

Քասիմին. — Ինքնաշարժ ... գրիչ մը :

Երուանդ Տէր-Անդրեասեանին. — Մեր
անմահներու կաճառին (Ուսումն. Խորհրդոյ)
անդամ :

Թեոդիկին. — Պոլիսի հայեվարին և Ա-
մենուն Տարեցոյցին անցած տարուան և այս
տարուան հաւաքածոյներուն մէջը եղած
խօսքերուն, բառերուն, տառերուն չափ ոս-
կի, որպէս զի նորէն Պոլիսի հայեվար մը
գրէ և որ ելած տարուան և գալիք տար-
ուան Ամենուն Տարեցոյցներ պատրաստէ՝ և
մենք նորէն վճարենք, անոնց մէջ գտնուած
խօսքերուն, բառերուն, տառերուն չափ ոս-
կի, որպէս զի ... Եւայլն կամ այսինքն եթէ
ուզենք կը շարունակուի :

Վահան Փափազեան (ԼԻԼԱ) . — Սինէ-
մաթօկրաֆի մեքենայ մը 10,000 ֆլիեկներով,
որոնք մեր մութ խաւերուն տեսարանները
պէտք է ըլլան :

Ա. Անտոնեանին. — Վերջին նորածեղութենէն ֆիստան մը... հանդերձ թուղիւրով:

Ենովք Արմենին. — Տուփ մը ոսկի ծայր, որոնք իրեն մեղմ յողուած գրեւ տան. ի հարկին կրնայ ոսկիի վերածել այդ ծայրերը, մաշեցնելէ ետքը անոնց ծայրերը:

Արեակ Ալպոյանեանին. — Բարակ ձայն ունեցող մարդու մը կոկորդը, պայմանաւոր փոխելու գործողութիւնը՝ վերաբուժապետ Տըթ. Զարդարը կատարէ:

Տֆ. Զարդարին. — Երկրորդ ուռ մը, որուն վրայ նշգրալը զարկած ատեն, մէջէն... ոսկի դուրս թափի:

Տովիւթին. — Միքայէլ Շամտանճեանին քարկացած երեւոյթը... Շնորհով Մարդիկ վէպին յառաջաբանին միջուկին համար:

Յակոբ Տ-Յակոբեան. — Զօրութիւն և կարողութիւն... մանուկները կրթելու:

Հրանդ Նազարեանին. — Իր քաշել տրւած անհամար լուսանկարներուն կենդանացումը... Եղիա Տէմիրճիպաշեանի գլուխով:

Մերուժան Պարսամեանին. — Հասակը երկարելու դեղ... Մուսաէն զափնին խըլելու համար:

Արսաէս Յարութիւնեանին... որ ի Մալկարա. — Արեւ, Բարեւ, դուն փարա կուգես, ճանճմ բանաստեղծները փարա պէտք կունենան որ, մանաւանդ ձեզի պէս լեռնա մարգարէսան վստահախանութիւնս բանաստեղծ մը:

Pour mot de la fin.

Երուանդ կամ Երուանդիկ եւ կամ Երուանդ-ֆոլիֆ Թօլաեանին... ի նպաստ. — 10,000 ոսկի, այո՛ ոսկի, բայց խնդրեմ, ի՞նչ կ'ընենք կոր, ի՞նչ ըրինք, բայց սանկ եկէք որ ըսեմ, այո՛, իրաւ թէ ոսկի, բայց ոսկիա... մանդր:

Եւ ամէն անոնք, որ այս վերի ցանկին մէջ մոռցուած են, անոնց ալ... ի միւս անգամ դալստեան:

Աղօթեցիք ինծի համար, որովհետեւ հիմակուհիմակ աղօթքի պէտք ունիմ... դէպի անդեմականը չուել չալու հոգիս:

ԱՆՄԵՌՈՒԿ

Ս Է Ր Ը

(ԽՈՇԵՐ)

Սէրն երիտասարդութեան գոհարն է:

Սէրը հոգիին բանաստեղծութիւնն է:

Սէրը երկիւղ մ'է:

Սէրը գինովութիւն մ'է:

Սէրը սրտին բոյրն է:

Սէրը զգածման դրդում մ'է:

Սէրը հոգիին քնարն է:

Սէրը հոգին կրծող որդի մըն է:

Սէրը մարդուն մէջը բոցավառող հուր մըն է:

Սէրը գերբնական, աստուածաբուխ զգացում մ'է:

Սէրը գեղեցիկներուն երազանքն է:

Էրը՛ կիսանքի պայքարներէն մին է, պէտք է անոր դէմ մաքառիլ եթէ անոր մէջ մէջ մը ինկար:

Սէրը տեսակ մը երջանիկ խենդութիւն է:

Սէրը թռչուն մ'է, սիրտն անոր վանդակը:

Սէրն ողբ մ'է, սիրելն աշխատիլ:

Սէրը հոգիին արշալոյսն է:

Սէրը կապ մ'է, սիրելը կապել, սիրունին կապողը, սիրահարը կապողը և ահա այս չորսն ազգականութիւն մը կը կազմեն:

Սէրը յոյս մ'է և յուսալը կեանք, ուրեմն սէրն ալ կեանք է:

Սէրը քաղցր հիւանդութիւն մ'է, որմէ չենք զիտեր ինչպէս կը բռնուինք և չենք գիտեր ինչպէս կը տարտղնի:

Սէրը մեր կեանքը շողացնող արեւն է:

Սէրը ալեկոծեալ ծով մ'է, որուն մէջ ինկողը կամ կը խեղդուի և կամ մէն մի կուտակին անվեհեր դէմ դնելով, հալիւ հաղ կրնայ ալեաց ծոցէն աճատիլ:

Սէրը մեթօսի մ'է որ երկու հոգիով կ'երգուի մեթօսին լրանալէն ետքը նազարաբը կը մնայ և երբեմն զայն միս մ'նակ կ'երգեն:

ՎԱՀՐԱՄ ՍԵՎԱՃԵԱՆ



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԵՐԱ. — Ձմեռնամուտն ի վեր, հոս կարգ մը տուներու մէջ միակ զբօսանքն է բօֆեռը, արդ, կարգադրութեամբ որոշած են մասեհներ դնելով խաղալ, որպէսզի դիմագիծերը չեւեւան: (Դեռ ինչ պարագաներ կան... ուր մասեհին փրկարար դերը կը փնտրուի Ծ. Խ.)-

ՍԿԻՒՏԱՐ. — Անձրեւը իր սրունդները կախեց, կարգ մը չայիր-գեւղի միւսիւններ չկրնալով բաց օդին հոս հոն օրհնել, ըսկըսած են պատուհանէ պատուհան դրացի օրիորդներու հետ խառակեօզ խախցնել վարագոյրներու ետին:

ՆՈՅՆ. — Հոս, անցեալ շաբթուանէ ի վեր ընտանեկան խօսակցութիւնը, ինչպէս նաեւ սրճարաններու անկիւնը դարձող նիւթն է, պատկառելի ժառանգութեան մը եճել-պէտի պէս օդին մէջ դառնալը: (Բիմ եէտի քիմ թառաոր, սէօնպէթ քիմէ կառատը Ծ. Խ.):

ԳԱՏԸԳԻՒՂ. — Հոս թղթախաղը իբր ձմրան ժամանց ընդունուած չէ, այլ միւր զիւր: Շատ մը տուներու մէջ առ ի չգոյժ գաշնակի ջութակի և մանտօլինի, կարգ մը երիտասարդներ խամիչէ տիւտիւկ շինելով եառուկայի կը չալեն կոր: (Օրիորդներէն ալ կը խնդրուի քեցնիքի խաբախները իրար դարնելով ափսոսանքի ընել Ծ. Խ.):

ՂԱՒԱԹԻԱ. — Եկեղեցւոյն ժամկոչ աղբարը, երկու շաբթի կ'սպասէ ջոջ աղջիկատեսի մը որ կուշանայ: Խնդճ մարդուն համար կ'ըսուի թէ՛ նոյն իսկ իր քսակէն տուփ մը բուռուա, սանտր մը և հայելի մը առած է, աղջկանը թուպէթը թազեցնելու համար ի պահանջել հարկին գործածուելու համար: (Նէվազիլ է եղեր ժամկոչ աղբար, քիչ մը համբերէ Ծ. Խ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Իմացածնուս նաչելով Ատաբազարի մեր պահանջը այս անգամ ալ Ռուբէն Սարընան անուն մէկու մը գրպանը տաքցուցեր է, ձմեռուան մօտ գար մեղ ալ տաքցնէր նէ գէշ չպիտի ըլլար: Ինչ անուշ դրամ է եղեր մերը որ, ձեռքէ ձեռք, բերնէ բերան կը շրջի կոր...

ՆՈՅՆ. — Բիչ մը քիչ գահգահներով չէր որ ողջունեցինք քիւնիւ գաւեշտական շմբոր իբր բամբիլաւթ թխմուած տեսանք դրական շաբթաթերթի մը մէջ. Յաջողութեան համար փորձելը ամօթ չէ, այլ այսպանելի կէտը սա է որ, փտտած գրութիւնները նորի տեղ քշել կ'ուզուի ժողովուրդին քիթին խնդալու աստիճան յամառութեամբ, հա՛, հա՛ հա՛...:

ՊՐՈՒՍԱ. — Տեղւոյն Ազգ. վարժարանի Ֆրանսերէն և հայերէն լեզուներու նախորդ ուսուցչին տեղը, թէեւ երեք մանչ և աղջիկ ուսուցիչներ կարգուած են, և 700 դուրուշի փոխան 16 Օսմ. ոսկի ամսաթոշակ յատկացուած է, սակայն, տակաւին այս երեքն ա'լ բաւական չեն: (Ինչ լաւ կարգադրութիւն! Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Անցեալները հիւր վարդապետ մը՝ վարժարանի տնօրէնը գովելու ատեն՝ եկեղեցւոյ ատենէն, ըսաւ թէ. «սխալ է այն դրոյցը՝ որ վարժարանի հոգաբարձութեան նկատմամբ տեղի ունեցած է և այն կարծիքը թէ, տօրեմը պօս գլուխին մեկն է: Վարդապետին համամիտ ենք այս մասին:

ԿԱՐԵՒՈՐ

Աչքերնիդ լոյս...

Ե թօլանան, մեր անառակ որդին կամ լաւ է ըսել մեր enfant gâté կրկին կը վերելջէ այս սիւնակներուն մէջ, անա լուր մը որ քիչ մը քիչ հաճոյքով չէ որ պիտի ընդունուի անշուշտ մեր զուարթասէր ընկերացողներէն:

Ե. Թօլայեան կը խոստանայ, ըստ նոր կարգադրութեան ամէն շաբթու երեւիլ թերթիս մէջ, իր սրամիտ երգիծանքներով և ֆանթազիներով, որոնք այնքան հաճոյքով կը կարգացուէին ասկէ առաջ:

Յաջորդ թիւով իր entrée կընէ հետեւեալ գեղեցիկ և հետաքրքրաշարժ վերնագրով:

ԲԱՅՈՒՄ

ԲԱԻՇԱՆՃԵԱՆԻ ԿՏԱԿԻՆ

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Գաւաթի քիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏՆԱՇ ԿԻՆԸ

Հէրլօք Շօլմա ծանրապէս ծխափողը լեցուց, վառեց և՝

— Այս գործը այնքան խուռն է որ չերեւար, ըսաւ:

— Այո՛, այնքան խուռն արգարեւ, յարեց Վիլսօն:

— Գործը կ'ըսեմ, ինչու որ ինծի համար մէկ հատ մը կայ. Պ. տ'Օթուաին մահը, մահաբանիկ պատմութիւնը և չմոռնանք 23 սէրիի 514 թիւին գաղտնիքը, ուրիշ բան չեն եթէ՝ զանազան դէմքերը իտարտեալ կընոջ, ուրեմն. իմ խելքովս խնդիրը պարզապէս, այս միեւնոյն պատմութեան երեք յաջաւէտները միացնող կապը պէտք է գտնել և ապացուցանել երեք մէթոտին միութիւնը: Կանխմարտ, որուն դատաստանը քիչ մը յարեւանցի է, այս միութիւնը անյայտանալուն մէջ կը գտնայ, սնոր համար որ ամէն բան կերթայ կուգայ և աներևոյթ կը մնայ: Այս հրաշքի նմանող հնարքը զիս չգոհացնէր:

— Եւ այն ատեն.

— Այն ատեն, ըստ իս, արտայայտեց յստակօրէն Շօլմա, այս երեք պատմութեան կազմիւր բացայայտ՝ ձեր ծրագիրն է, յայտնի թէ և մինչեւ հիմա՝ բայց աննշմար. գործը բերելու է այն հողին վրայ՝ որ ձեզմէ ընտրուած է, այն տեղը, ուր Պ, Ժէռպուաի հետ ձեր պայքարէն սկսաւ. ցուցուցիք այն տեղը ուր պիտի միանայիք, Պարոն Տէթինանի յարկաբաժինը ձեզի համար աւելի ապահով կ'երեւար ժամագրութեան իտարտեալ Կնոջ և Օր. Ժէռպուաի:

— Բռնօքէսէօրին աղջիկը, յարեց Վիլսօն:

— Եւ կապոյտ աղամանդին գալով, որ Պարոն տ'Օթուա տարիներէ ի վեր մատին վրայ կը կրէր, փորձեցիք ձեզի սեպհակաշել, ո՛չ, ինչու որ պարոնը իր եղբորը բռնակարանը կը նստէր. վեց ամիս ետքը ա-

ռաջին փորձը... Աղամանդը ձենէ կը խուսափի: Աճուրդի կը դնեն: Աճուրդը անվրտանք պիտի անցնէ՛ր. ո՛չ. այն պահուն որ Հէրլման դրամատէրը պիտի տունէր, կին մը, նամակ մը կ'ուղղէ իրեն, և Կրօզօնի կոմսունին է որ, պատրաստուած, աղղուած այդ կինէն, կ'առնէ աղամանդը: Իսկայն պիտի անհետանա՛ր մատանին. ո՛չ. միջոյնները կը պակսէին, բայց կոմսունին իր գլխակին մէջ տեղաւորուեցաւ. ահա ինչ որ կ'սպասէիք. մատանին կ'անհետանայ:

— Վերերեւելու համար Պէյնշէնի աղուալի փոշիի չիշին մէջ, առարկեց Արսէն Լիւբէն:

— Ինծի չէ որ պիտի պտտմես աղ, ըսաւ Հօլմա ձեռքը սեղանին վառնելով, թող անխելքները ատիկայ ընդունին, թող այնպէս ըլլայ, բայց ես որ ծերուկ աղուէտ մըն եմ...

— Այսինքն...

Շօլմա՝ Արսէն Լիւբէնի ծռեցաւ և քանի մը բառեր մըմտաց ախանջի վար և յետոյ շտկուեցաւ:

Արսէն Լիւբէն վայրիեան մը լուռ կեցաւ: Յետոյ աչքերը Անգլիացիին ուղղելով.

— Ժիր անձ մըն էք ըսաւ:

— Ժիր անձ մը, անանկ չէ՞, շեշտեց Վիլսօն, հիացումէն բերանարաց:

— Բէ՛հ, ըրաւ Անգլիացին փաղաքշուած այս զոյգ մը պատիւներէն, պիտի բաւէ մըտածել, ըսաւ, բայց հիմակ որ ենթադրութիւնները սահմանափակուած են, կը կարծեմ որ պղտիկ զգուշութեամբ մը, դիւրին պիտի ըլլայ ինծի գտնել, թէ ինչու երեք պատմութիւնները յանգած են՝ Գլարէյքօ փողոցի 25 թիւ տունը, Հանրի Մարթլէն՝ ծառուղին 134 թիւը, և Կրօզօնի գլխակին պատերուն միջև: Ամէն գործերը հող են: (Շարունակելի)

ՄԵԾ. Վ ԱՃԱՌ-ԱՏՈՒՆ.

ՀԱՆՈՒՆԵՐԻ ԵՐԱՆԻՆԻ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբ Զատնայ, Թոփաքեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գինեւոր անմրցելի
աժանութեամբը չհաճ է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելոգիներու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերը մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Ոսկարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—10



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ. խանի
Տակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Զինասանէ, Հնդկասանէ, Ճապան եւ Ճա-
պոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտնային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵՍԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 շր.	Վեցախալայ	25 շր.
Գաւառաց համար	» 54 »	»	27 »
Արսասանման	» 12 շր.	»	6 շր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պալ-Ալի հաստի Աստուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաքութով եւ կամ բոսթայի փութով 20 հաւա-
20 զրույի հաշուով:

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ծ ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերալկուններ, բուրդէ և մետաքսէ չրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օժախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանց տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւ նութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐԾԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—49

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՒԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գասք-գիւղ, Մէօհիւրսար
նասէսի.

Յոդ Surbegerian

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոնային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօ-

սեղավարժութեամբ (բռաքիմ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Ջութակ: Գիշերօթիկները կը վստիչեն կատարեալ անունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսուչին: Մասնաւորապէս տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. եշ. Շք. օրերը ժամը 5 և 9 զիմեղով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտուհեաց վերածուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-ՏԳՈՐԿԵ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ